

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 25

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

11.12.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյան - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Գ.Տոնոյանը, Ա.Զանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Դեմիրճյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխոյանը, Հ.Մկրտչյանը, Ս.Ասրյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյան - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին /Զեկ. Ն.Սարգսյան/
 2. Ամանորյա միջոցառումների նախապատրաստական աշխատանքների մասին /Ա.Նալբանդյան/
 3. Առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի ամփոփման և ձմեռային արձակուրդների մասին /Զեկ. Մ.Սայադյան/
 4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին /Զեկ. Հ.Պապոյան/
 5. Դեկտեմբերի 6-ին և 8-ին կայացած մրցույթների արդյունքների մասին /Զեկ. Ս.Լամբարյան/
 6. Աղբահանության վճարների գանձման ընթացքի մասին /Զեկ. Ա.Զանազյան/
 7. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին /Զեկ. Գ. Հակոբյան/
- Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին և ՀՀ Լոռու

մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան ցուցանիշներն ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների կողմից աղբահանության պայմանագրերի կնքման, վարձավճարների գանձման և 2018թ. բյուջեում որպես եկամտի աղբյուր նախատեսելու և հավաքագրելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և հսկողություն սահմանել համայնքների կողմից հողերի վարձակալության վճարների գանձման և եկամուտների աճի ապահովման ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից զարգացման ծրագրերի պատասխանատուների և սոցիալական աշխատողների՝ ըստ չափորոշիչների ընտրության և վերապատրաստումների անցկացման նկատմամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել տրված հանձնարարականների կատարումը սահմանված կարգով մինչև տարեվերջ ապահովելու ուղղությամբ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և առաջարկել համայնքների ղեկավարներին հնարավորինս սեղմ ժամկետում գույքագրել համայնքներում առկա զբոսաշրջության և համայնքային զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող այցեքարտեր և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ